Արձանագրություն N 2
« ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Թ-35 » ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և գնահատման հանձնաժողովի նիստի կասեցման

Նիստի անցկացման՝
ՀՀ ներքին գործերի նախարարություն (ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեում,), 403 սենյակ ,
-օրը՝ 30.09.2025թ.-ժամը՝ 16:00
Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Խաչատրյան /ԳԱՊ/

Հանձնաժողովի անդամներ Ա. Ալոյան, Ա. Նալբանդյան,
Գ. Ինդոյան, Հ. Բրգանունց

Հանձնաժողովի քարտուղար՝ Թ. Հովեսյան

1. Տեղեկություններ «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Թ-35 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի գնահատման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ armeps.am կայքի միջոցով հրապարակված գնման ընթացակարգի հայտերը գնահատող հանձնաժողովի կողմից բացվել են 15.09.2025թ-ին, ժամը 10:00-ին:

Գնահատող հանձնաժողովի կողմից հայտի ուսումնասիրությունը ավարտվել է 30.09.2025 թվականին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ – 0

2. «ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-2025/Թ-35» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

Գնման ընթացակարգին հայտեր է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

հ/հ	Մասնակիցների անվանումը	հասցեներ
1	«Վ.ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ	Ք. Երևան, Արտաշեսյան 77/2

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

3.1 Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկներ:

1. Բանավոր թարգմանչական ծառայությունների մատուցում					
ՀՀ	**մասնակցի անվանումը**	**նախահաշվային գին/ծառայությունների վարձատվության չափը /**	**Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)**	**ԱԱՀ**	**Ընդհանուր գինը**
1	«Վ.ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ	մինչև 2 000 000 /5000/	4,150	830	4,980

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5 դեմ 0:

4. Մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրման, անհամապատասխանության և դրանց շտկման մասին

5.1 Գնահատող հանձնաժողովի կողմից հայտի ուսումնասիրության արդյունքում մասնակից «Վ.ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամաբ, մասնավորապես.

«Վ.ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած դիմում-հայտարարության երկրորդ պարբերությունում ընկերության անվանումը սխալ է նշված:

5.2 Ելնելով 5.1 կետում արձանագրվածից՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի պահանջները՝ մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակից «Վ.ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Անհամապատասխանությունը շտկելու դեպքում ներկայացված հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի՝ համաձայն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետի:

Անհամապատասխանության չշտկումը կդիտվի մասնակիցների ստանձնած պարտավորությունների խախտում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

6.Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել մասնակիցների կողմից ներկայացված շտկված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում, ք. Երևան, Նալբանդյան 130 հասցեում, 403 սենյակ:

Ընդունվել է որոշում՝ կողմ –5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝
ոստիկանության գնդապետ ---------- Կ. Խաչատրյան

Անդամներ՝

ոստիկանության փոխգնդապետ ---------- Ա. Ալոյան

ոստիկանության փոխգնդապետ ---------- Ա. Նալբանդյան

ոստիկանության մայոր ---------- Գ. Ինդոյան

գլխավոր մասնագետ ---------- Հ. Բրգանունց

Քարտուղար՝
ՏՎ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ ---------- Թ. Հովեսյան